Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1-ի N 57 - Ա
որոշման

Արարատի մարզի Լուսառատի համայնքի մշակույթի տան մասնակի նորոգման ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Արարատի մարզի Լուսառատի համայնքի մշակույթի տան մասնակի վերանորոգման արդյունքում մարզադահլիճի ստեղծում: Համայնքի երիտասարդության համար ֆիզիկական պատրաստության և առողջ ապրելակերպի պայմանների ստեղծում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ: Երևան, Կարապետ Ուլնեցու 14:
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ: Մշակույթի բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	8,654,970 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արարատի մարզի Լուսառատի համայնք:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թվականի ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական աշխատանքների իրականացնում՝ 01.04.2019 թ.-30.10.2019 թ., 8,654,970 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական աշխատանքների իրականացում 4,200,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի, նյութերի ձեռքբերում՝ 4,454,970 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: Ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր ծախսերի հաշվին:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան, Լուսառատի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ